Հաստատված է՝
Տնօրինության 21.08.2025թ-ի
Թիվ DEC 12-72 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 16.09.2025թ-ից:

Էներգաարդյունավետ վերանորոգման հիփոթեքային վարկեր		
Շահառու	ՀՀ-ում սեփականության իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի	
Վարկառու/համավարկառու/երաշխավոր	• 18-70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք և վերջինիս ընտանիքի անդամները: • Վարկի սպասարկման ընթացքում վարկառուի/համավարկառուի 70 տարեկանը լրանալու դեպքում եթե վարկի մայր գումարի 70% մարված է, ապա հայտը մերժման ենթակա չէ:	
Տրամադրման ռեսուրս	«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»	Բանկի ներքին ռեսուրսներով
Վարկի նպատակը	Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգում (ԷԱ վերանորոգման օբյեկտ է հանդիսանում ՀՀ տարածքում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարանը կամ անհատական բնակելի տունը)	ՀՀ տարածքում գտնվող բնակարանների և անհատական բնակելի տների, ինչպես նաև առևտրային նշանակության տարածքների էներգաարդյունավետ վերանորոգում
Վարկի գումար	300,001-5,000,000	300,001-10,000,000
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Վարկի ժամկետ	60-84 ամիս	36-84 ամիս
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	14%	
Վարկի տարեկան փաստացի Տոկոսադրույք	14.94%-18.85%	
Ապահովման միջոց	•Մինչև 1,000,000 ՀՀ դրամի դեպքում առանց երաշխավորության, •1,000,001- 5,000,000 ՀՀ դրամի դեպքում 1 երաշխավոր*, միայն էներգաարդյունավետ ապրանքների ձեռքբերման դեպքում առանց երաշխավորության	
		• 5,000,001-10,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում անհրաժեշտ է 2 երաշխավոր, որոնց զուտ եկամուտը 250,000 ՀՀ դրամից բարձր է, եթե OTI**≤45% և վարկի գումարը 5,000,001-7,000,000 ՀՀ դրամ է, ապա 1 երաշխավոր*
	Բոլոր այն դեպքերում երբ հաճախորդը չի ցանկանա ներկայացնել երաշխավոր, կարող է գրավադրվել վերանորոգվող անշարժ գույքը:	

Հաստատված է՝
Տնօրինության 21.08.2025թ-ի
Թիվ DEC 12-72 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 16.09.2025թ-ից:

Գրավի առարկային գնահատումը իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից	
Վարկ/գրավ հարաբերակցություն	Գույքի շուկայական արժեքի մինչև 70%
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ միանվագ կամ փուլային
Մարման եղանակ	Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/
Ապահովագրություն	Չի պահանջվում
Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը	ԸՊԵ≤ 60%
Ժամկետանց մայր գումարի տույժ	0,1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0,13% օրական
Վարկի տրամադրման միջնորդավճար	Առկա չէ
Վարկի սպասարկման ամսական վճար	Առկա չէ
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Առկա չէ
Վարկառուի/համավարկառուի/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	• Վերջին 12 ամսում(գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի թիվը չպետք է գերազանցի 30 օրը : • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող: • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող: * Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում:
Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով	- սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ, - իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 – 52,000 ՀՀ դրամ, - նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ, - գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ: Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

*Երաշխավորը պետք է ունենա զուտ եկամուտ 250,000 ՀՀ դրամից բարձր:

Այլ պայմաններ

1. Էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր ծախսերը պետք է կազմեն վարկի գումարի առնվազն 30%:
2. Կենցաղային տեխնիկայի ձեռքբերման չափաբաժինը չի կարող գերազանցել ընդհանուր վարկի գումարի 10%-ը:

3. Բարելավման աշխատանքները պետք է ամբողջությամբ ավարտված լինեն վարկի տրամադրումից 1 տարի հետո: Վարկը մասնաբաժիններով տրամադրելու դեպքում՝ 1 տարի ժամանակահատվածը հաշվարկվում է վերջին մասնաբաժնի տրամադրման ամսաթվից սկսած:
4. Վերանորոգվող գույքի սեփականատերը պետք է հանդիսանա վարկառուն կամ վերջինիս ընտանիքի անդամները:
5. Բանկի ներքին ռեսուրսով տրամադրվող վարկերի դեպքում վերանորոգվող գույքը կարող է գտնվել նաև գնման իրավունքի փուլում:
6. «Ազգային Հիփոթեքային Ընկերության» միջոցով վերաֆինանսավորվող վարկերը պետք է համապատասխանեն «Ազգային Հիփոթեքային Ընկերության» վերանորոգման վարկերի համար սահմանված պարտադիր չափանիշներին:

Ծանոթություն

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին և երաշխավորին կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկառուին տրամադրվելիք վարկի էական պայմանները:

1. Վերանորոգման/կահավորման աշխատանքների նախահաշիվը լրացվում է հետևյալ հղմամբ *Վերանորոգում (nmc.am)* և պետք է ունենա դրական հաստատում:

2. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365/366 օրվա հաշվարկից:

3. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:

4. Գրավի և իրավունքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:

5. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով և *ԱՀԸ Բնակարանային վարկերի վերաֆինանսավորման կարգով* սահմանված պահանջներին,

6. Վարկի մերժման գործոններն են.

- Վարկառուի և երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով և *ԱՀԸ Բնակարանային վարկերի վերաֆինանսավորման կարգով* սահմանված պահանջներին :

7. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 3 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 4-7 աշխատանքային օր:

8. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

9. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

10. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

11. Երաշխավորն իրավունք ունի.

• Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

• Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

• Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

12. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am , ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

13. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

14. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

16. ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ՄԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ: ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱՋԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am :

18. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐՋԻՆՍ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ